ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26-ը դեկտեմբերի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ս. Պետրոսյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Մարգարյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Ա/Ձ Արայիկ Աբրահամյանի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ա/Ձ Արայիկ Աբրահամյանի կողմից չի ներկայացվել Հավելված 3-ը և Հավելված 3.1-ը:
Հանձնաժողովը կասեցրել է նիստը և Ա/Ձ Արայիկ Աբրահամյանին ծանուցել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: 13.01.2020թ. նիստը շարունակվել է և և գնահատող հանձնաժողովը ներկայացրած փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:
1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 13.01.2020թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց

Ա/Ձ Արայիկ Աբրահամյանի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Կարապետյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան